Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	**ԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (7.20ՖԶԷ001)**
ECTS կրեդիտ	2 կրեդիտ
Դասընթացի պատասխանատու դասախոս	Բարսեղյան Մ.Գ, ֆ.մ.գ.դ., ասիստենտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • բացահայտել տվյալ բնագավառում գիտության արդի վիճակը, • ձևակերպել տեղական և միջազգային չափանիշներին բավարարող գիտական հոդվածներ, *(կարողություններ)* • բացահայտել գիտության տվյալ բնագավառի արդի խնդիրները, • ձևակերպել և ընդհանրացնել ուսումնասիրման մեթոդները և ստացված արդյունքները, • ձևակերպել և ներկայացնել հրատարակման գիտական հոդված:
Դասընթացի թեմատիկ ծրագիր	• Ներածություն: Ինչ է գիտությունը և նրա նշանակությունը քաղաքակիրթ աշխարհում: Գիտության դասակարգումն ըստ ոլորտների: Գիտատեղեկատվական շտեմարաններ և հղման համակարգեր: Գիտաչափություն և գիտաչափական ցուցիչներ: • Ինչ է գիտական հոդվածը: Ինչպես գրել հոդվածի վերնագիրը (վերնագրի կարևորությունը և ընտրությունը): Ինչպես թվարկել հեղինակներին և հասցեները: Անունների հերթականությունը: Հեղինակների ընտրությունը: • Ինչպես գրել գիտական հոդվածի ամփոփագիր (սահմանում, ամփոփագրերի տեսակները, բառերի խնայողություն): Ինչպես գրել հոդվածի ներածություն

	(ուղեցույցներ, ուղեցույցների հիմնավորումը, մեջբե–ռումներ և հապավումներ)։ • Ինչպես գրել գիտական հոդվածի նյութեր և մեթոդաբա-նություններ բաժինը (բաժնի նպատակը, նյութեր, մեթոդ-ներ, վերնագրեր, չափումներ և վերլուծություններ, հղումների անհրաժեշտություն, աղյուսակներ և գծապատկերներ, ճիշտ ձև և քերականություն)։ • Ինչպես գրել ստացված արդյունքների մասին (արդյունք-ների բովանդակությունը, ինչպես աշխատել թվերի հետ, ձգտել հստակության, խուսափել ավելորդ բառերից, լրացուցիչ նյութերի առցանց համալրում)։ Ինչպես գրել քննարկումների մասին։ • Ինչպես հղում տալ օգտագործված գրականությանը (կանոններ, էլեկտրոնային օգնություն, հղումների ոճեր, հղում էլեկտրոնային նյութերին)։ Ինչպես ընտրել գիտական պարբերականներ։
Դասընթացի գրականության ցանկ	• Barbara Gastel and Robert A. Day. How to Write and Publish a Scientific Paper. Eighth Edition. Santa Barbara, California: Greenwood, 2016, 352 pages, ISBN 978-1-4408-4280-1. • Borrego M., Douglas E.P., Amelink C.T. Quantitative, qualitative, and mixed research methods in engineering education. Washington, D.C., Journal of Engineering Education, 2009, 98(1), 53–66. • Uwe Flick, An introduction to qualitative research. Fourth edition. London, SAGE publications Ltd, 2009, 528 pages, ISBN 978-1847873248.